ՀՏԴ.159.9 Հոգեբանություն

ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

Ինննա ՄԿՐՏՉՅԱՆ

Բանալի բառեր՝ *ծնողական դեպրիվացիա, ցածր ինքնագնահատական, ֆրուստրացիա, ընտանիք, փոխհատուցում, անտեսում, ագրեսիվություն, սոցիալ-հոգեբանական մթնոլորտ, բացասական հուզական վիճակ*
Key words*:* parental deprivation, low self- esteem, frustration, family, compensation, neglection, aggression, social-psychological atmosphere, negative emotional state
Ключевые слова*:* родительская депривация, низкая самооценка, фрустрация, семья, компенсация, пренебрежение, агрессивность, социально-психологическая атмосфера, отрицательное эмоциональное состояние

И.Мкртчян
Психологические последствия родительской депривации

Психологические теории утверждают важнейшую роль эмоциональных, ласковых и надёжных отношений между ребёнком и родителем в младшем детском возрасте для гармоничного психологического развития ребёнка и его личности. Но, к сожалению, сегодня есть дети, которые с младшего возраста лишены материнской любви, семейной теплоты и защищённости, из-за чего разрушается их психологическое благоприятное развитие и вследствие чего возникают разные психологические проблемы.

I.Mkrtchyan
The Psychological Effects of Parental Deprivation

The psychological theories confirm the major role of the emotional, affectionate and reliable relationship between a child and his parents. These relationships are exceedingly important for the harmonious psychological and personal growth in early childhood. However, unfortunately, there are many children who are deprived of maternal love, family warmth and protection. This disturbs the favorable mental growth of the child and causes many psychological problems, including those, which are connected with marked anxiety and fears.

Հոգեբանական տեսությունները պնդում են, որ վաղ մանկության տարիքում, երեխայի ներդաշնակ հոգեբանական զարգացման և անձի ձևավորման համար, կարևոր է հուզական, քնքուշ և հուսալի հարաբերությունների դերը երեխայի և ծնողների միջև:Բայց, ցավոք սրտի, այսօր կան երեխաներ, որոնք կրտսեր տարիքից զրկված են մայրական սիրուց, ընտանեկան ջերմությունից և պաշտպանությունից, ինչի հետևանքով քայքայվում է նրանց հոգեբանական բարենպաստ զարգացումը և առաջանում են տարբեր հոգեբանական պրոբլեմներ:

Բոլոր ժամանակներում էլ եղել են երեխաներ, որոնց բաժին է ընկել դառը ճակատագիր՝ մեծանալ առանց ծնողների:Արդյոք կարող է լինել ավելի վշտալի, ավելի անարդար վիճակ:Երեխաների՝առանց ծնողական խնամքի մնալու պատճառները բազմազան են, ինչպես և բազմազան ու տարբեր են մարդկանց ճակատագրերը:Վիճակագրական տվյալները վկայում են, որ մանկատներում երեխաների թիվը մեծանում է՝ կապված պատերազմների, բնական աղետների, տնտեսական վատ պայմանների հետ:Ցանկացած զարգացած հասարակություն պետք է գիտակցի և տեղակացված լինի ծնողական դեպրիվացիայի հետևանքների մասին,ուստի հրատապ է դառնում այդ հետևանքների հաղթահարմանն ուղղված ճանապարհների և մեթոդների կիրառումը:

Ծնողական դեպրիվացիայի հետևանքով դժվարանում է երեխայի ադապտացիան սոցիալական միջավայրում:Դա պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:Օբյեկտիվ գործոնների շարքում հատուկ կարևորություն են ներկայացնում՝ նրանց նկատմամբ հասարակության զգուշավոր, ընտրողական վերաբերմունքը,իսկ սուբյեկտիվ գործոններից են՝բացասական անձնային նորագոյացությունները:

Այսօր ավելի շատ գիտական փաստեր և դիտարկումներ են վկայում այն մասին,որ ծնողական դեպրիվացիայից տառապում են ոչ միայն առանց ծնողների մնացած, կամ երկար ժամանակ հիվանդանոցում մնացած երեխաները, այլև ընտանիքում ապրողներից շատերը:Իհարկե, ծնողական դեպրիվացիայի հետևանքները առավել վառ են արտահայտված մանկատներում մեծացող երեխաների մոտ:Այսպիսի երեխաների զարգացման իրավիճակը իսկապես տագնապալի է: Մանկատան շրջանավարտների շրջանում մեծ է հանցագործների, ալկոհոլ և թմրանյութ

---

* *Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը*

օգտագործողների,ինքնասպանություն կատարողների թիվը և շատ փոքր տոկոսն է հարաբերականորեն նորմալ ապրում[1]:

Հետազոտելով ժամանակակից գիտության մեջ եղած հոգեբանական դեպրիվացիայի բնութագրումները՝**Ի.Լանգմեյերը և Զ.Մատեյչիկը** նշում են, որ համապատասխան հետազոտությունները հանգեցնում են այն եզրակացության, որ երեխան առողջ զարգացման համար կարիք ունի սիրո և հոգատարության:Եթե նա շրջապատված է բավարար համակրանքով և հուզական հիմք ունի, ապա դա կարող է փոխարինել խաղալիքներին, դաստիարակությանը և կրթությանը:Ըստ այս հեղինակների «Հոգեբանական դեպրիվացիան հանդիսանում է հոգեբանական վիճակ, որն առաջացել է այնպիսի կենսապայմաններում, որտեղ սուբյեկտին հնարավորություն չի տրվել բավարարել մի քանի հիմնական կենսական, հոգեբանական պահանջմունքները բավարար երկար ժամանակ»[2]:

Աշխարհի շատ երկրներում անցկացված հետազոտությունները վկայում են այն մասին, որ ընտանիքից դուրս մեծացող երեխայի զարգացումը ընթանում է յուրահատուկ ուղիով և նրա մոտ ձևավորվում են բնավորության, վարքի, անձնային յուրահատուկ գծեր, որոնց մասին հաճախ չի կարելի ասել, արդյոք ավելի լավն են դրանք, թե վատը, նրանք ուղղակի ուրիշ են:Եվ ավելին, հիմքեր կան ենթադրելու,որ հենց հոգեբանական գործոնն է հանդիսանում ոչ միայն հոգեկան,այլև մարմնական խաթարումների պատճառը[3]:

Դեպրիվացիա տերմինը այսօր լայնորեն օգտագործվում է հոգեբանության և բժշկության մեջ: Անգլերենից թարգմանաբար՝ **deprivation**, այն նշանակում է «կորուստ, զրկվածություն, կենսական կարևոր պահանջմունքների բավարարման հնարավորության սահմանափակում»:Այս հասկացության էության բացահայտման համար կարևոր է անդրադառնալ այդ բառի վերլուծությանը:Հոգեբանության մեջ «դեպրիվացիա» տերմինը ներմուծել է անգլիացի հոգեբան **Զ.Բոուլբին:**Նրա հանրահայտ **«Մայրական հոգատարությունը և հոգեկան առողջությունը»** աշխատությունը, որը առաջին անգամ հրապարակվել է 1951թ.-ին և մասնավորապես նկարագրում է 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ էվակուացված երեխաների հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքները:Դրանց վերլուծությունը ցույց տվեց, որ մանկության տարիներին ծնողների հոգածությունից և սիրուց զրկված երեխաները ետ են մնում թե հուզական, թե ֆիզիկական, թե ինտելեկտուալ զարգացման մեջ:

«Սիրո անսահման պահանջմունքը», Լ.Տոլստոյի կարծիքով, երեխաների առանձնահատուկ գիծն է, և դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի տառապանքների և ապրումների կարող է հասցնել երեխային այդ սիրո բացակայությունը:«Ամեն ինչ մոռացվում է, բայց մանկությունը՝ երբեք»,- անհնար է հերքել այս բառերի ճշմարտացիությունը: Իհարկե կարևոր է մարդու կյանքի ցանկացած հատվածը, սակայն վաղ մանկությունն առանձնահատուկ կարևորություն ունի:Նշելով մանկության տարիներին ստացած գիտելիքների նշանակությունը, **Լ.Տոլստոյը** գրում է. «…5 տարեկան երեխայից մինչև ես մի քայլ է, իսկ նորածնից մինչև 5 տարեկան երեխան՝ սարսափելի տարածություն»:

Սիրո և կապվածության ընդունակությունը նորմալ զարգացման հիմնական բաղադրիչն է, որը համարում են հոգեկան առողջության ցուցանիշ բոլոր խոշոր գիտնական հոգեբանները և հոգեբույժները,սկսած **Զ.Ֆրոյդից**:Մանկատներում սոցիալական շրջապատի անխուսափելի անկայունությունը և բազմաքանակությունը, իր վրա երեխայի հոգածությունը վերցրած կենտրոնական կերպարի բացակայությունը ուղեկցում է նրան ամբողջ կյանքի ընթացքում, ստեղծելով ծայրահեղ անբարենպաստ պայմաններ երեխայի հուզական զարգացման և կապվածության ձևավորման համար,ավելին՝ նպաստում է մտերմության և սիրո երեխայի բնական ձգտման քայքայմանը:Այսպիսի երեխաների մոտ չի ձևավորվում հետագա հոգեկան զարգացման կարևորագույն՝ **աշխարհի հանդեպ բազային վստահության** զգացումը:Աշխարհն ընկալվում է նրանց կողմից որպես անկանխատեսելի, վտանգավոր և անապահով:Կապվածությունից հետո անխուսափելի կորուստները նպաստում են հոգեկան ցավից պաշտպանող անզգացմունքայնության պաշտպանական մեխանիզմի ձևավորմանը:Որոշ հետազոտողներ առաջ են քաշում մանկատան երեխայի անձի ձևավորման յուրահատուկ մոդել:Նրանք նկարագրում են ակտիվ, նախաձեռնող և ազատ վարքի ներքին թերզարգացած մեխանիզմներով անձնավորության և շեշտում են մանկատների երեխաների մոտ կախված, ռեակտիվ վարքի գերակայությունը:Ինքնակարգավորման ոչ բավարար զարգացած մեխանիզմները կոմպենսացվում են տարաբնույթ «պաշտպանական մեխանիզմների» ձևավորմամբ:Այսպես՝ ստեղծագործական մտածողության փոխարեն զարգանում է շաբլոնայինը,

[1] Д. Майерс <<Развитие ребёнка >>, Москва 2001 г.,стр. 20
[2] Развитие личности в условиях психической депривации/ Под. Ред. И. В. Дубровиной/ Москва 1991г., стр. 11
[3] А. М. Прихожан, Н.Н. Толстых <<Психология сиротства>>, Москва 2007 г.,стр. 77-79

վարքի կամայականության ձևավորման փոխարեն՝կողմնորոշում դեպի արտաքին վերահսկողություն, դժվար իրավիճակի սեփական ուժերով հաղթահարման փոխարեն՝ հուզական չափազանց բուռն արձագանքի հակվածություն, նեղացկոտություն:

Մանկատան պայմաններում դաստիարակման արդյունքում երեխաների մոտ նկատվում են նաև ինտելեկտուալ և աֆեկտիվ-պահանջմունքային ոլորտների զարգացման առանձնահատկություններ: Այդ յուրահատկությունը արտահայտվում է գործողությունների ներհոգեկան պլանի ձևավորվածության, սեփական մոտիվացիայի, արտաքին իրավիճակին կողմնորոշման գերակայության մեջ: Որակապես այլ բնույթ է կրում նաև «Ես»-ի բոլոր կողմերի (իր մասին պատկերացումների,սեփական անձի հանդեպ վերաբերմունքի, «Ես» կերպարի, ինքնագնահատականի) ձևավորումը:

Մանկատների սաներին բնորոշ շատ ցածր ինքնագնահատականը անձնային շեղումների և նևրոտիկ խանգարումների հիմք է:Ծնողական սիրո պահանջմունքի դեպրիվացիայի հետևանք է հանդիսանում նրա մոտ ինքնավստահության բացակայությունը, որը, ձևավորվելով տարիքային զարգացման վաղ փուլերում, հետագայում դառնում է մանկատան սաների կայուն բնութագրիչ:

Ծնողական խնամքից զուրկ երեխաների համար նախատեսված հաստատության պայմաններում երեխայի մոտ տեղի է ունենում որոշ սկզբունքորեն այլ մեխանիզմների ինտենսիվ ձևավորում, որոնք թույլ են տալիս նրան հարմարվել հատուկ պայմաններում և դրանով կարծես փոխարինում են նրա անձնավորությունը:

Ծնողական խնամքից զրկված երեխաների սոցիալական հարմարումը ընթանում է յուրատիպ հոգեբանական օրինաչափություններով: Այն տալիս է կյանքի պայմաններին, սոցիալական իրողություններին և սոցիալական միջավայրի ներգործություններին և պահանջներին, կեցության փոփոխություններին համակերպվելու հնարավորություն և կարողություն: Սոցիալական կյանքին և միջավայրին ծնողազուրկ և ծնողական խնամքից զրկված երեխաների հարմարումն ուղեկցվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ տարաբնույթ դժվարություններով:Դրանք պայմանավորված են մի քանի վճռորոշ հանգամանքներով՝ սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակով, սոցիալական համարժեք և ոչ համարժեք ընկալումներով, մանկավարժական բարձիթողի վիճակով և որպես դրա հետևանք՝ սոցիալական ոչ ադապտիվ վարքով, ոչ բարյացակամ, անվստահելի, երբեմն էլ բացասական վերաբերմունքով շրջապատողների, ապագայի նկատմամբ, բացասական ներգործությունների ընկալունակությամբ, ինչպես նաև կյանքի աղքատ փորձով, ցածր հուզականությամբ, ցածր ինքնագնահատականով և այլն:Սոցիալական հարմարման ընթացքի հաջողության ապահովումը անհրաժեշտաբար պահանջում է մի շարք հոգեբանական պայմանների ապահովում՝ երեխաների մեջ դրական հույզեր, դրական վերաբերմունք սեփական ուժերի նկատմամբ, վստահություն, ինքնագիտակցության, ինքնագնահատականի ձևավորում և այլն:Ծնողական հոգածությունից և խնամքից զրկված երեխաների սոցիալական ադապտացիան, սոցիալականացումը և մանկական միջավայրում նրանց ինտեգրացումն իրականացնելիս ի հայտ են գալիս բազմաթիվ դժվարություններ և կոնֆլիկտածին իրավիճակներ:Այդ դժվարությունների պատճառները առավելապես սուբյեկտիվ կամ հոգեբանական են և դրանք պայմանավորված են նրանով, որ սոցիալական ադապտացիայի պահանջները բախվում են ադապտացվող երեխայի վարքի ստերեոտիպերին, բնավորության գծերին, մարդկանց, նրանց անձի ու վարքի մասին նրանց պատկերացումներին, արժեքային համակարգին և այլն: Այդ հակասությունները հանգեցնում են կոնֆլիկտային իրավիճակների, որոնց լուծման հոգեբանական պայմանը երեխայի նկատմամբ անհատական մոտեցումն է, ջերմ վերաբերմունքը:

Հեղինակներն ընդգծում են, որ «Ընտանիքը նպաստում է երեխայի մեջ կարևոր այնպիսի անհատական անձնային որակների ձևավորմանը, ինչպիսիք են վստահությունը, կարեկցելու, օգնելու ընդունակությունը, տարբեր սոցիալական իրավիճակներում մարդկանց հետ փոխազդելու ունակությունը, իր՝ որպես անձնավորության ինքնահաստատման, սեփական անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները և պահանջմունքները դրսևորելու ընդունակությունը, մյուսներին և սեփական «ես»-ը ադեկվատ ընկալելու և հասկանալու ունակությունը»[1]:

Երեխայի լիարժեք զարգացման համար երկու ծնողներն էլ կարևոր են:Բայց բազմաթիվ հետազոտություններն ապացուցել են, որ կապվածության ձևավորման համար սկզբունքորեն կարևորվում է մոր դերը [2]:

[1] Ս. Մակիչյան «Ծնողազուրկ և ծնողական խնամքից զրկված երեխաների սոցիալական հարմարումը և դրա դժվարությունների հոգեբանական պատճառները», Երևան 2008:
[2] Дж. Боулби <<Привязанность>>, Москва 2003 г. стр. 79-82

Ըստ Զ.Ֆրոյդի, մայրը հանդիսանում է մարդու կյանքում հաճույքի առաջին օբյեկտը, և նրա կորուստը կարող է բերել ծանր հոգեկան ապրումների, ֆրուստրացիայի:

Կարելի է ասել, որ երեխայի ներդաշնակ զարգացման համար նրա կյանքի առաջին 2-3 տարիներին առավել մեծ նշանակություն ունի մոր վերաբերմունքը նրա նկատմամբ: Ավելի մեծ տարիքում մեծանում է հոր դերը: Բայց հայրն ու մայրը, որոնք ընտանիք են կազմում, անբաժանելի են:

Պատկերացնել մանկությունն առանց ծնողների, հատկապես առանց մոր դժվար է:Ծնողները ցանկացած մանկության անբաժան մասնիկներն են:Երեխայի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ է, որպեսզի նա շրջապատված լինի հոգատարությամբ, ուշադրությամբ, քնքշությամբ, որպեսզի նրա՝ դեռևս քիչ տարբերակված զգայարանների վրա ազդեն համապատասխան քանակության և որակի անհրաժեշտ գրգիռներ, որպեսզի երեխայի հոգեկանի բարդացմանը համապատասխան բարդանա, մեծանա նաև տեղեկատվության ծավալը:Թվում է թե մեր օրերում նման եզրահանգումները հատուկ քարոզման կարիք չունեն, սակայն դեռևս հանդիպում են մեծ քանակությամբ ծնողներ, որոնք տարբեր պատճառներով երեխային չեն տալիս անհրաժեշտ քանակությամբ հուզական տեղեկատվություն:

Ծնողական դեպրիվացիան ծանր է և նշանակալի ցանկացած տարիքում, սակայն տարբեր տարիքային փուլերում այն առավել ազդում է անձի ձևավորման և զարգացման տարբեր կողմերի վրա: Կարևոր նշանակություն ունի, թե որ հասակում է երեխան դեպրիվացիայի ենթարկվել: Տարբեր տարիքային փուլերում մարդու համար գոյություն ունեն առաջատար գործունեություն և սենզիտիվ՝ մարդու օնտոգենետիկ զարգացման շրջան, երբ արտաքին որոշ ներգործությունների նկատմամբ երեխան դրսևորում է զերզգայունակություն, որի հետևանքով լավագույն պայմաններ են ստեղծվում հոգեկան ֆունկցիաների ու ընդունակությունների զարգացման համար:Նորածնի համար ամենակարևորը այն է, թե սիրում են նրան, թե ոչ; երբ մայրը գրկում է երեխային, համբուրում է նրան, երգում է նրա համար, նա տալիս է երեխային նրա ուղեղի համար այն բոլոր անհրաժեշտ ազդակները, որոնք վերջնական արդյունքում երեխային կդարձնեն հոգեպես ամբողջական մարդ[1]:

Այսպիսով, հետազոտության արդյունքները վկայում են դեպրիվացիայի պայմաններում մեծացված անձանց մոտ մի շարք նորագոյացություններ՝ նրանց մոտ առկա են տագնապայնության բարձր մակարդակ, ագրեսիվություն, միևնույն ժամանակ, որպես փոխհատուցող մեխանիզմ, ձևավորվում է զերակայության զգացում, պահանջատիրական վերաբերմունք շրջապատի նկատմամբ: Հետազոտվողների մոտ ակնհայտ է հեռակա նպատակներ կառուցելու և դրան հասնելու գործնական քայլերի իրագործման անկարողություն: Շրջապատողների հետ շփման սիրո, հարգանքի պահանջմունքը առավել սրված է նրանց մոտ:Այս ամենը, դրա հետ մեկտեղ շրջապատող մարդկանց զգուշավոր վերաբերմունքը բավականին դժվարեցնում է նրանց հարմարումը սոցիալական միջավայրում:

Բազմաթիվ հետազոտություններ գոյություն ունեն դեպրիվացիայի հոգեբանական հետևանքների և դրանց հաղթահարման ուղիների մասին: Կարելի է նշել դեպրիվացիայի հաղթահարման մի շարք պայմաններ.

1. Փակ տիպի մանկական հաստատություններում աշխատող անձնակազմի բարձր հոգեբանական կրթվածության մակարդակ:
2. Երեխայի հոգեկան զարգացմանը նպաստող և անհատական ու տարիքային առանձնահատկությունները հաշվի առնող պայմանների ստեղծում:
3. Պետական հովանավորություն, հոգեբանական դեպրիվացիայի պայմաններում մեծացող երեխաներին օգնություն ցուցաբերելու ծրագրերի մշակում:
4. Հասարակության լուսավորչություն և համարժեք վերաբերմունքի ձևավորում:

Հոգեբանական դեպրիվացիայի պայմաններում մարդու մոտ ակտիվանում են փոխհատուցող և պաշտպանական մեխանիզմները, որոնք հաճախ ունենում են ոչ կառուցողական բնույթ:

Այս խնդիրները պետք է քննարկել, ուսումնասիրել, լուսաբանել, ստիպել մարդկանց մտածել դրանց մասին, կանխել աղետը, այլ ոչ թե անօգնականորեն թափահարել ձեռքերը, երբ այն արդեն տեղի է ունեցել:

Սակայն, ինչքան էլ փորձենք փոխհատուցել երեխայի ծնողական դեպրիվացիան, ոչ մի կասկած չկա այն բանում, որ երեխայի դաստիարակության համար լավագույն միջավայրը ընտանիքն է; եթե իհարկե այն չափազանց դիսֆունկցիոնալ չէ և նրանում չկան բռնության տարբեր ձևեր:

Ծնողական դեպրիվացիան սոցիալական բարենպաստ պայմաններով հաղթահարելու փորձերը անհաջողությամբ են պսակվել:Երեխան ծնողական սիրո, ջերմության, հասարակության հետ

[1] В. С. Мухина <<Психология дошкольника>> Москва 1975 г., стр. 10-15

լիարժեք շփման, տպավորությունների կարիք է զգում: Որդեգրումը այն օպտիմալ մոդելն է, որը ունակ է որբ երեխային փոխհատուցել ընտանեկան հոգատարությունը, որի կարիքը նա այդքան զգում է:Ցանկացած երեխայի դաստիարակությունը, մանավանդ որդեգրված, չի անցնում առանց խնդիրների: Ըստ **Ա.Սպիվակովսկայայի** հետազոտությունների՝ երեխային որդեգրած ընտանիքում երեխայի կերպարը խիստ գնահատողական է դառնում ծնողներին մշտապես ուղեկցող վախով, որ երեխան «անբարենպաստ գենոֆոնդ» ունի: Այս վախի ազդեցությամբ ծնողները ֆիքսում են ցանկացած,սխալ վարքի նույնիսկ փոքրիկ գծերը՝ դրանք գնահատելով որպես վարքի շեղում:Հետազոտողը գրում է. «Երեխայի հետ կյանքը դառնում է մշտական անհանգիստ որոնում այն ամենի, ինչն իբրև թե սխալ է, ոչ այնպես, ինչպես ուրիշների մոտ»:

Այսպիսով, ուսումնասիրելով ծնողական դեպրիվացիան և դրա հետևանքները, մենք հանգեցինք մի շարք եզրակացությունների՝

1. Երբ մարդը երկար ժամանակով զրկված է լինում իր համար կենսական կարևոր պահանջմունքների բավարարման հնարավորությունից, որպես հետևանք ի հայտ են գալիս մի շարք բացասական նորագոյացություններ և հոգեկանի զարգացման դժվարություններ:Այս երևույթը ստացել է «հոգեբանական դեպրիվացիա» անունը:
2. Դեպրիվացիայի հետևանքները տարբեր են՝ կախված այն հանգամանքից, թե որ տարիքում է մարդը ենթարկվել դրան: Որքան փոքր հասակում է դա տեղի ունեցել, այնքան մեծ են բացասական հոգեբանական հետևանքները:
3. Տարբեր տարիքային փուլերում դեպրիվացիայի ազդեցությունները ունեն իրենց առանձնահատկությունները՝ կախված տվյալ տարիքային փուլի առաջատար գործունեությունից, հոգեբանական նորագոյացություններից, կոնկրետ տարիքային փուլերում առավել մեծ է դեպրիվացիայի ազդեցությունը հոգեկան որևէ կոնկրետ ոլորտի վրա:
4. Երեխան կարող է դեպրիվացիայի ենթարկվել ոչ միայն ընտանիքից դուրս մեծանալիս, այլև ընտանիքում՝ երբ երեխայի և ծնողների միջև չեն ձևավորվում հուզական ջերմ հարաբերություններ:
5. Ծնողական դեպրիվացիայի հետևանքով ի հայտ են գալիս մի շարք բացասական հոգեբանական նորագոյացություններ, մասնավորապես՝ անինքնավստահություն, ագրեսիվություն, կապվածության, հուզական ջերմության չբավարարված պահանջմունք, շրջապատող աշխարհի նկատմամբ անվստահություն, մի շարք փոխհատուցող և պաշտպանական մեխանիզմներ, որոնք, համակցվելով, նրանց նկատմամբ շրջապատի զգուշավոր կողմնակալ վերաբերմունքով դժվարեցնում են նրանց սոցիալական ադապտացիան:

Երեխային կյանք տալը առաջին, չնայած և հիմնական քայլն է ծնողական աշխատանքի մեջ, և մնացածը՝ գլխավորը, դեռևս առջևում է:Իսկ այդ հիմնականը երեխային ծնողական սիրով և ջերմությամբ մեծացնելն է, որը պատրաստ է ինքնուրույն մեծ կյանքին, վստահ է իր ուժերին, ունակ է օգնություն ցուցաբերել և ապրումակցել, չի վախենում դժվարություններից, ունակ է հոգ տանել իրեն և իր մտերիմներին:

Երեխային լույս աշխարհ բերելով՝ ծնողը մեծ պատասխանատվություն է ստանձնում հասարակության, իր խղճի և Աստծո առջև:

Գրականություն

1. А. М. Прихожан, Н.Н. Толстых <<Психология сиротства>>, Москва 2007 г.
2. Дж. Боулби <<Привязанность>>, Москва 2003 г.
3. Д. Майерс <<Развитие ребёнка>>, Москва 2001 г.
4. В. С. Мухина <<Психология дошкольника>>, Москва 1975 г.
5. Развитие личности в условиях психической депривации /Под. Ред. И. В. Дубровиной / Москва 1991г.
6. Ս. Մակիչյան «Ծնողազուրկ և ծնողական խնամքից զրկված երեխաների սոցիալական հարմարումը և դրա դժվարությունների հոգեբանական պատճառները», Երևան 2008:
7. Internet www Google.ru

Տեղեկություններ հեղինակի մասին.

Իննա Մկրտչյան *- Մանկավարժության և հոգեբանության ամբիոն, ԱրՊՀ*
E:mail: inna.mkrtchyan.1980@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ., պրոֆեսսոր, Ա.Մխիթարյանը: